«Իսկ անոնց, որք կը գժկամակին կրօնի դէմ՝ կ՚ըսէ Պասքալ, պէտք է նախ ցուցանել որ նա արդարութեան հակառակ չէ. նա Ճշմարիտ է և պէտք է յարգել զայն, ապա սիրելի ընել զայն և գոհութիւն մատուցանել նորա Ճշմարիտ լինելուն համար. եւ ապա անհերքելի վկայութեամբք ցուցանել անոր Ճշմարտութիւնը, հնութիւնըն ու սրբութիւնը իւր մեծութեամբըն ու բարձրութեամբը»։

Ահա այսպէս ծրագրած է այն մեծ մարդը, որուն հետեւեցանք մենք մեր բանախօսութեան մէջ, մենք քրիստոնէութեան հակառակորդներուն յառաջ բերած հատուած փաստերով չխօսեցանք, եւ ահա վկայութեանց շարք մի եւս մի և նոյն եզրակացութիւնն պիտի հետեւեցնէ և վերջ պիտի տանք մեր բանախօսութեան։

Քրիստոնէութիւնը կատարեալ է, իսկ մարդիկ անկատար։

Արդ անկատար սկզբունքէ մի կարելի չէ կատարեալ հետեւութիւն հանել. ուրեմն և քրիստոնէութիւնը մարդիկներէ յառաջ եկած չէ։

Եթէ նա ՚ի մարդկանէ չէ, ուրիշ տեղէ մը կարելի չէ լինել բայց եթէ Աստուծոյ, և եթէ Աստուծոյ է նա, ուրեմն մարդիկ զայն մի միայն աստուածային յայտնութեամբ կարողացան ճանաչել։

Ուրեմն քրիստոնէութիւնը Աստուծոյ յայտնեալ կրօն մ՚է։

Թարգմանեաց Ն. Գ. Ու.
Չուքէնէ Գ. Տ. Յ.
Իսմայէլը։

ՇԱԹՕՂՐԻԱՆ

# ԱՌՈՂՋԱԿԱՆ

(Շարունակութիւն. տես թիւ 3.)

1. ԵՐԿԻՒՂ ԱՍՏՈՒԾՈՅ. Մեղքէ, մոլութենէ և չար սովորութենէ հեռ կենալու և ազատ մնալու մէկ հատիկ առաջին ու գլխաւոր միջոցն է Աստուծոյ երկիւղը. չար գործողը ոչ երկիւղածութիւն ունի և ոչ Աստուածսիրութիւն. Աստուած է գերագոյն բարի, Հայր բարեգութ, նախախնամող և բարերար, որ միմիայն հաճութիւն ունի սիրոյ սրբութեան և բարութեան մէջ. ուստի կը կամի որ մեք ալ սիրով և յօժարութեամբ հետեւինք իրեն. ինչպէս որ նա զմեզ կը սիրէ, մեք ևս սիրեմք զինքը. և սիրել ուրիշ կերպով չը լինիր բայց եթէ երկիւղածութիւ նորա կամաց հնազանդելով, փախնալով որ իրեն կենդանատու օրինաց և ամենաբարի կամաց ներհակ չը գործեմք. Այսպիսի երկիւղածութեամբ մեք կը ճանաչեմք Աստուծոյ ամենագիտութիւնը, որ մեր սրտի գաղտնիքն ալ գիտէ, և կը զգամք նորա՝ ամէն տեղ լինելը, որ ոչ խորշ մի և ոչ խաւարին խորափիտ մի նորա ներկայութենէն թաքուր չէ. և ամենեւին գաղտնեաց և մթութեան մէջ գործուած ու մտածուած բան մի չը կայ, որ նորա ամենատես աչքը վրիպած չը լինի. կը ճանչնամք որ նորա աչաց սրբութիւնը կ՚ատէ մարդկան պիղծ գործքերը եւ կը զզուի անոնցմէ։

Արդ երկիւղած մարդը գիտնալով Աստուծոյ այս կատարելութիւնները անճթխածութեամբ զինքը պարկեշտութեան ու սրբութեան մէջ կը կեցնէ ոչ Աստուծոյ ներկայութենէն պատկառելու և ամօթահար լինելու խորհուրդ մի չունենայ և փոքր գործ մի չընէ. այնպէս կը պատրաստէ իւր անձը որ միշտ պատրաստ

digitised by A.R.A.R.@

երես, ուրախ սրտով համարձակի Աստուծոյ ներկայանալ եւ առանց ստաւօքի եւ ամօթոյ նորա հոգեկան գիրկը դիմել։ Վերջապէս Աստուծոյ երկիւղը կը հաստատէ այն արդիական անկեղծ ազնուութիւնը, որ զուտ մի խիղճ բարի եւ գթոտ հոգւոյ յարգելու համար բնականապէս կը պահէ Նորա բարութենէն եւ գթութենէն թելադրուած. եւ ամէն պարագայի մէջ իր բոլոր շարժումն ու գործերը կ՚ուղղէ դէպ 'ի Հօրը կամաց հաճոյանալու։ Զի խորհիր, չը խօսիր եւ չը գործեր այնպիսի բան, որ Հայրը զայրացնէ եւ նորա դժգոհութեան առիթ տայ։ Այս է սիրոյ հնազանդութիւնը եւ այս է Աստուծոյ երկիւղ բառածը, որ սուրբ եւ ազնուական զգացում մի է, որ որդիական է եւ ոչ ծառայական, եւ զոր Իմաստունը ՍԿԻԶԲՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ կը համարի։

Եւ արդարեւ առանց սուրբ եւ ազնուական երկիւղ մի իր սրտին մէջ կըրող անձը չը մեղանչեր, եւ ահա անմեղութիւնն է իմաստութիւն որ առ Աստուած կը տանի եւ յաւիտենական երանութիւն կը պարգեւէ։ Առանց որ բաւեր երկիւղիւ Աստուծոյ ծառայողը անշուշտ նորա խօսքերը պիտի պահէ եւ նորա հրամանները պիտի կատարէ. եւ ահա Աստուծոյ խօսքերն են որ իրմեզ կարգերուն մեղանչելէ՝ չափ կը դնեն մեր կիրքերուն մեր խոտորած ճանապարհները կը շտկեն եւ լոյս կու տան մեր ոտքերուն մեր կենաց ճանապարհին վերայ։

Դուք ալ ուրեմն, ով որդեակք իմ, Աստուծոյ խօսքերուն եւ նորա սուրբ օրէնքը մէջ երկիւղածութեամբ եւ հնազանդութեամբ կրթուեցէք եւ Մարգարէին հետ շարունակ երգեցէք։

«Քու խօսքերդ իմ սրտիս մէջ միշտ պահեցի, որ քեզի դէմ չը մեղանչեմ։

Քու վկայութիւններդ ցոյց տըւած ճանապարհին պիտի զուարճանամ, ամէն առատ մեծութեան մէջ զուարճանալու պէս։

Ամէն չար ճանապարհէ ետ կեցայ, որպէս զի քու խօսքերդ պահեմ։

Քու պատուիրաններդ խնամով եւ անմոլոր օրէնսգէտ լինելով բոլոր չարութեան ճանապարհներէն ատեցի։

Ո՜հ, քու խօսքերդ որչափ անոյշ է իմ քիմքս. մեղրէն շատ աւելի անոյշ է իմ բերնիս։

Երիտասարդն ինչով պիտի շտկէ իր ճամբան, բայց միայն քու խօսքերդ պահելով։

Տէ՛ր, քու խօսքերդ ճրագ են իմ ոտքերուս եւ լոյս կու տան իմ ճանապարհիս։

Ահա այս խօսքերէն եւ ասոնց պէս բազմաթիւ վկայութեամբ եւ փորձով ինկ հաստատուած ենք որ մեր կեանքն ու փրկութիւնը Աստուծոյ խօսքն է, որոց մէջ կը կրթուի երկիւղած մարդը. դուք եւս այս խօսքերուն հոգին զգալով Աստուծոյ պատուիրանաց մէջ կրթուեցէք միշտ, զանոնք գործադրելու համար ջանացէք եւ ձեր խորհրդածութեան նիւթ ըրէք եւ տեսէք թէ ձեզ ինչ կը տրփեցնեն։

Առաքեալը կ՚ըսէ. «Ամէն մէկը կը փորձուի իր ցանկութիւններէն ձգուած եւ խաբուած. այնուհետեւ ցանկութիւնը յղանալով մեղք կը ծընանի.... Ուստի ամէն աղտեղութեան եւ չարութեան մէջ յաւելուածը մէկդի թողէք, ձեր մէջ սերմանուած խօսքը հեզութեամբ ընդունեցէք որ կրնայ փրկել ձեր հոգիները. բայց խօսքը կատարողներ եղէք եւ ոչ թէ միայն լսողներ. (Յ. Ա. ԻԲ։

«Աստուած իր խօսքը ղրկեց եւ բըժշկեց զանոնք ու փրկեց իրենց ապականութիւնէն։»

digitised by A.R.A.R.@

Մեր, սիրելիք իմ, եթէ երկիւղածութիւն ունինք, եթէ զԱստուած սիրենք, անշուշտ Աստուծոյ խօսքերը ամփոփելու փոյթ կ'ունենանք, և կը ջանանք զանոնք ամենայն երկիւղածութեամբ որ զմեզ կը փրկեն ամեն տեսակ մեղքերէ և չարութենէ. Եթէ մենք Աստուծոյ խօսքերը չը լսենք չը ամփոփենք ու չը կատարենք, աստուածապաշտ և ճշմարիտ հաւատացեալ չենք սեպուիր, վասն զի սիրած չենք լինիր, և ահա այն ատենն է որ մենք կ'անհանգստանք ամեն տեսակ մոլութեանց և մեղաց մէջ. Աստուծոյ կը հաւատամ ըսելը միայն հերիք չէ. եթէ ճշմարիտ է հաւատքդ պէտք է նորա կամքը կատարես իր հրամանները ամփոփելով որք կեանք ու երջանկութիւն կուտան.

Միթէ սիրելիք իմ, չէ՞ք փափաքիր Աստուծոյ որդի և Յիսուսի Քրիստոսի եղբայր անուանիլ. ասանկ մեծ պատուոյ և փառաց մէջ չը ցանկար, ասանկ չնաշխարհիկ պատիւ մը կենալ չուզեր. միթէ աշխարհի բոլոր փառքերը, պատիւներն ու իշխանութիւնքը Աստուծոյ որդի և Յիսուսի եղբայր լինելու ամենաբարձր փառաց կրնա՞ն հաւասարիլ, քաւ լիցի. Այլ ափսոս, որ մարդիկ աշխարհի փուճ և անցաւոր փառքեր ստանալու համար ամեն դժուարութիւն կը քաշեն, շատ անգամ պատկառանքի հակառակ նուաստ եւ անարգ միջոցներով ալ կը դիմեն. բայց այս մեծ և անեղծանելի փառքն ստանալու համար թեթեւ ճիգ մը չեն ըներ. Յիսուսի Քրիստոսի եղբայր, քոյր և մայր ըսուելու համար փոքրիկ աշխատութիւն, քիչ մը նեղութիւն քաշել չեն կամիր. — Բայց մարդ ի՞նչպէս կարող է սիրելով այս փուճ պատուոյն և այս մեծ փառաց արժանանալ. — Այս հարցմանս պատասխանը նոյն խակ մեր Տէրոջմէն պէտք է ընդունինք, որ կ'ըսէ. «Ահա իմ մայրս ու եղբայրներս ասոնք են, որ Աստուծոյ խօսքը կը լսեն ու կը կատարեն. որովհետեւ Աստուծոյ կամքը կատարողն է իմ եղբայրս ալ, քոյրս ալ, մայրս ալ»։ Ահա պարզ և մեկնութեան կարօտ չեղող խօսք մը, որ բացայայտապէս կը ցուցնէ թէ իր խօսքերը պահողն է միայն իրեն հաճոյ։ Կը տեսնէ՞ք, ահաւասիկ ձեր ուրիշ բարձրութիւնները կատարելու չափ դժուարութիւն չը կայ այս ամենամեծ փառաց հասնելու համար, միայն Աստուծոյ խօսքերը լսելու, նոյն մէջ կրթուելու և զանոնք կատարելու է, որուն փոխարէնը եւ պատուոյ այնքան բարձր, այնքան բերկրական և երջանկաւէտ է որ ամեն դառնութիւն կը քաղցրացնէ եւ դժուարութիւն կը թեթեւցնէ. փորձովը գիտէ, որ նորա խօսքերը կատարելը դժուար չէ, ինչպէս Սուրբ Յովհաննէս ալ կ'ասէ թէ «Նորա պատուէրները ծանր բաներ չեն»։

Ամենակարողն ու ամենակատարեալ Աստուած մարդուն այնպիսի կատարելութիւն և զօրութիւն տուած է, որ շատ դժուարին բան կարող է ընել, օգնութիւն ալ ստանալով Նորոգիչ Սուրբ Հոգիէն, հերիք է որ յօժարութեամբ կամի. Բայց նորա անձնիշխան կարողութեան ու զօրութեան փառքն ու պարծանքը այն ատենն է, որ իւր անարգ, անօգուտ և վնասակար յօժարութեան դէմ զինելով և մարտնչելով անոնց յաղթէ, չարէն հեռանայ և բարւոյն հետեւի. բուն յաղթանակի և պսակի արժանաւորութիւնն ալ այն ատեն է. Առանց պատերազմի յաղթութիւն չը կայ, և առանց յաղթութեան փառաց յաղթանակին ընդունիլ անկարելի է. Մենք ամեն փորձերան մեր





digitised by A.R.A.R.@

կիրքերուն եւ յօժարութեանց դէմ պատերազմ ունինք, անոնց պէտք է յաղթենք ու չէ թէ յաղթուինք. մարմինը՝ և ինչ որ մարմնոյն է, հակառակ են Հոգւոյն. եթէ մեք մեր հոգին առաքինութեամբ եւ բարեպաշտութեամբ հրահանգած և զօրացուցած չը լինինք, մեր երկրաքարշ մարմինը կ'առնու զայն և իւր հաճոյից կը խոնարհեցնէ. —Ի՞նչ է մարմնոյ հաճոյքը, մեղք և մոլութիւն, որ թշնամութիւն է Հոգւոյն, և որպէս զի հոգին նորա մէջ չ'ընկղմի, պէտք է 'ի մանկութենէ աստուածպաշտութեան և աստուածսիրութեան մէջ կրթուիք, Աստուծոյ սուրբ երկիւղովը և խոհերովը մտնիք ու աճիք. փոքրկութենէ ջանաք որ բնաւ մոլութի մի չը գործէք. պէտք է որ դուք ինչ և իցէ անխղճել բան մի գործելէ առաջ սաստիկ երկիւղ և ամօթ կրէք. ամօթխածութիւը մեծ զէնք մի է չարութեան դէմ, երբ մարդ զայն գործելէ յառաջ կամաչէ, և այս ամօթխածութեամբ կը փախչի և կը զգուշանայ մեղքէ ու չարէն գործելէ.

Աստուած ամենատես և ամենագէտ է. ամեն ժամանակ ամեն տեղ ամեն մթութեան խորշերուն մէջ անգամ անոր ներկութենէն. պէտք է պատկառինք և իւր հրամաններուն հակառակ բնաւ գործ մի չընենք.

Որդեակք իմ, եթէ զձեզ խաբելով մեղքի յօժարեցնեն, արթուն կեցէք, մի խաբուիք. սոսկացէք ամեն տեսակ չարութենէ և զանոնք ձեզ սորվեցնողներէն հեռացէք. Նոքա, ինչ ալ լինին, «սատանայի առաքեալներն են. նոքա Աստուծոյ հակառակ են. Աստուած ձեր որտին գաղտնիքներն ալ գիտէ, Նա ձեր խորհուրդներն ալ պիտի դատէ, ուրեմն Նորա ամենատես աչքէն և ամենագէտ խնամութեան առջեւէն ո՞ւր պիտի կրնաք փախչիլ, ո՞ր ծածուկ տեղ պիտի կրնաք պահուիլ որ Նա զձեզ չը տեսնէ. ուրեմն ինչո՞ւ կ'առանձնանաք . . . .

Պէտք է գիտնաք որ ամեն գաղտնի խորքի համար ալ հաշիւ պիտի պահանջուի, հապա ո՞ւր մնաց այն գործքերը որ յայտնապէս Աստուծոյ արդարութեանը ու բարութեան ներհակ են, ինչպէս են մարմնոյ ցանկութեան կամ հեշտախտութեան գործքերը.

Այս ամենը գիտնալով՝ հիմակուանէ, ձեր մանկութեան օրէն, խիստ փոքր հասակէն սկսեցէք Աստուծոյ երկիւղին մէջ կրթուիլ. անմեղ, սուրբ և աստուածային խորհուրդներով զբաղիլ. Նորա օրէնքներն ու պատուէրները երկիւղածութեամբ ձեր ամեն խորհրդոց, գործոց ու շարժմանց կանոն ըրէք. այնպէս որ անոնց հակառակ եղածը թող ձեզ ալ հակառակ լինի. եւ այս ամենուն մէջ պէտք է այժմէն կրթուիք. ապա թէ ոչ վերջէն դժուար կը լինի և մեծ օգուտ մի չընէր. «Ցկչէ ո՛վ մարդ, քու Արարիչդ քու մանկութեան օրերուդ մէջդ». կըսէ իմաստունը. վասն զի երբ այն գեղեցիկ օրերը, այն սիրուն ու զուարթալից օրերը առանց Աստուծոյ կամքին անցնէք վերջէն թշուառ օրերուդ մէջ, ծերացած ու տկարացած օրերնուդ մէջ թէպէտ յիշէք, բայց նորա կամքը կատարելու կարող չըլլալով դուցէ օգուտ չունենաք, վասն զի եթէ այն առեն մանկութեան գործերէ դադրած էք, ձեր կամօք չէ. արդէն զգայարանքներն ինքնին հոգնած, տկարացած և դադրած կը լինին և այն առեն ըրածնիդ գուցէ առաքինութի ալ չը. եւ այս իալ երբ մանկութեան օրերնուդ մէջ յօժարութեամբ եւ երկիւղածութե հեռանալով չարութիւններէ և այնպէս մեծնալով ծերութեան կը հաս-

digitised by A.R.A.R.@

նէք. յաճախ ձեր բոլոր գործերը կամովին կը հնազանդին և աստուածա-հաճոյ են։

Սիրուն օրինակ մ'. եթէ դուք Աստուծոյ օրէնքներն ու կեանք պար-գևող խօսքերը այնչափ սիրէք որ այն ըլլայ ձեր ամենօրեայ խորհրդածու-թիւնը, եթէ Աստուծոյ պատուիրա-նաց մէջ կըթուիք, եթէ Աստուծոյ խօսքերը լսելու և կատարելու քաղց-րութեան համն առնուք. եթէ որդի-ական սիրով ակնածէք անկէ եւ նորա կամքին համաձայն չըլլալու երկիւղա-ծութիւն կրէք, այն ատեն երանու-թիւն ու օրհնութիւն պիտի ժառան-գէք։ "Երանի այն մարդուն որ Տիրոջ մէն կը վախնայ. այնպիսին նորա պա-տուիրանները շատ կը սիրէ։ Այնպիս-ւոյն զաւակը երկրի վրայ ուժեղ կ'ըլ-լայ և ուղիղ ազգերուն մէջ կ'օրհնուի. նորա տան մէջ փառք ու մեծութիւն կայ եւ անոր արդարութիւնը յաւի-տեանս յաւիտենից կը մնայ"։

Մեղաց դէմ մեծ զէնք է երկիւղա-ծութիւնը, որով մեղքի բոլոր հրա-պուրանքները բացէ 'ի բաց կը մերժէք։

Արդ եթէ դուք Աստուծոյ հայ-րական սէրը ճանչնաք և որդիական սի-րով անոր յարիք, շատ անգամ՝ քաղցր խանդաղատանօք իրեն դիմելու կարե-ւորութիւնները պիտի զգաք, թէ շը-նորհակալ ըլլալու և թէ իր գթու-թիւնը շարունակ խնդրելու. և ահա այս է Աղօթք։

ԱՂՕԹՔԸ աստուածպաշտութեան եւ երկիւղածութեան հետ մեծ կա-պակցութիւն ունի. և մեծ զէնք է մե-ղաց փորձութեան դէմ. չը մեղանչե-լու և մոլութիւններէ ազատելու հա-մար աղօթքը խիստ կարեւոր է. անոր համար էր որ Յիսուս առաքելոց թէ. "Պէտք է ամեն ժամանակ աղօթքի կե-նալ ու չը ձանձրանալ, ամեն ատեն աղօթք ըրէք որպէս զի փորձութեան մէջ չիյնաք"։

Բայց պիտի ըսէք թերեւս որ, "Ե-թէ ամեն ատեն աղօթք ընենք, երբ գործելու է". այսպէս ասողները տա-կաւին աղօթքին բուն նշանակութիւ-նը չեն գիտեր. հոգւով եւ ճշմարտու-թեամբ երկրպագութեան ինչ ըլլալը չեն հասկցած. այնպիսիները լոկ արտա-քին ձեւերն և սովորական եղանակ-ները միայն աղօթք կը համարին, ո-րով և չեն հասկանար յամենայն ժամ աղօթք ընելու պատուէրին իմաստը, ուստի և անոր օգուտը վայելելէ միշտ զուրկ կը մնան։

(Շարահիլէ.)

## ԲԵԹՂԵՀԵՄԻ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԽՆԴԻՐ

Որչափ որ Մասիս ժամանակագրա-կանի մէջ մերթ ընդ մերթ համառօտ տեղեկութիւններ հրատարակած եմք Բեթղեհէմի Ս. Ծննդեան Այրին և Տաճարին խնդրոյն նկատմամբ. բայց մեր ազգայնոց աւելի ամփոփ և շարու-նակեալ ծանօթութիւն տալու համար արժան կը համարինք, ինչպէս խոստա-ցած եմք, նոյն խնդրոյ մասին Ս. Ա-թոռոյս Տնօրէն Ժողովոյ Տեղեկագրի թարգմանը դնել։

"Բեթղեհէմի Ս. Ծննդեան Եկե-ղեցւոյն խնդիրը ըստ որում Ս. Տե-ղեաց խնդրոյն մէջ առաջին տեղին ու-նի, հետեւաբար Ազգ. մեծ և նուի-րական իրաւունք մը կայ նորա մէջ, և որ իր մեծութեան համեմատ մե-ծամեծ գանձերու ենթակայ եղած, 'ի նախնեաց անտի մեծամեծ աշխատու-թիւններ, մեծամեծ զոհողութիւններ եղած են այս մասին ընդ հնումն. Ազ-

digitised by A.R.A.R.@